արխիվ 234

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

375015, Երեւան 15, Գրիգոր Լուսավորչի 13

№ 1900-Ա «29» սեպտեմբերի 2004 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 07.05.2001Թ. «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.3 ՇԵՆՔԻ ԵՎ ԼԱԼԱՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Հ.456 ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կից կառավարման խորհրդի 24.09.2004թ. նիստի հ.26 արձանագրությունը.

1.Երևանի քաղաքապետի 07.05.2001թ. «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության Աբովյան փողոցի հ.3 շենքի և Լալայանց փողոցի վրա գտնվող ավտոտնակների զբաղեցրած հողատարածքների օգտագործման պայմանագիր կնքելու մասին» հ.456 որոշման 1.1. կետը 214 քմ մակերեսով հողամասի մասով համարել չեղյալ:

2.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ կատարել անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցում Լալայանց փողոցի հ.3 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Կարինե Կարապետյանի անունով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից շինությունը մեկ տարվա ընթացքում քանդելու պայմանով:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Ե. ԶԱԽԱՐՅԱՆ**